Համարը	*Տեսակը* Հիմնական
Տիպը Համաձայնագիր	*Կարգավիճակը* Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2016.07.13/1(35)	*Ընդունման վայրը* Երևան
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը* 12.11.2013
Ստորագրող մարմինը	*Ստորագրման ամսաթիվը* 12.11.2013
Վավերացնող մարմինը	*Վավերացման ամսաթիվը*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 03.06.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ «Կողմեր»,

ցանկություն ունենալով հաստատել ավելի սերտ համագործակցություն զբոսաշրջության բնագավառում և կարևորելով զբոսաշրջությունը որպես երկու պետությունների պատմությունը, մշակութային ժառանգությունը, ժողովուրդների կենցաղն ու ապրելակերպը ճանաչելու գործուն միջոց և որպես ժողովուրդների միջև բարի կամքի դրսևորման ձև,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են համագործակցել զբոսաշրջության բնագավառում՝ սույն Համաձայնագրին և իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան,

Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը կիրականացվի, մասնավորապես, հետևյալ ուղղություններով.

- երկու պետությունների զբոսաշրջության բնագավառի տնտեսավարող սուբյեկտների, հասարակական և ոչ առևտրային այլ կազմակերպությունների միջև համագործակցության հաստատմանն ու զարգացմանն աջակցություն,
- երկու պետությունների զբոսաշրջության զարգացման գործընթացին երիտասարդության մասնակցության, ներառյալ երիտասարդների փոխայցելությունների ապահովում,
- զբոսաշրջության ոլորտում ներդրումների ներգրավմանն աջակցություն,
- զբոսաշրջության բնագավառի տեղեկատվության փոխանակում,
- զբոսաշրջության պետական կարգավորման բնագավառում փորձի փոխանակում,
- երկու պետությունների զբոսաշրջային օպերատորների և լրագրողների փոխադարձ ճանաչողական այցերի կազմակերպում:

Հոդված 2

Կողմերն իրենց պետական իրավասու մարմինների միջոցով կաջակցեն զբոսաշրջության բնագավառում ներդրողների, տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև զբոսաշրջության բնագավառի հասարակական և ոչ առևտրային այլ կազմակերպությունների միջև համագործակցության հաստատմանն ու զարգացմանը:

Հոդված 3

Կողմերը կհամագործակցեն երկու պետություններում զբոսաշրջային ռեսուրսների ուսումնասիրության և գնահատման, զբոսաշրջային վայրերի կառավարման, հյուրանոցային շինարարության, ոլորտի շուկայագիտության և այլ բնագավառներում: Կողմերն իրենց օրենսդրությանը համապատասխան կնպաստեն այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Հոդված 4

Կողմերն իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, կձգտեն դյուրացնել երկու պետությունների միջև զբոսաշրջային փոխայցելությունների ընթացակարգերը:

Հոդված 5

Կողմերը կփոխանակեն մասնագիտական խմբեր, որոնք կմասնակցեն մարզական, երաժշտական, թատերական միջոցառումներին և ազգային փառատոներին, զբոսաշրջության ոլորտին վերաբերող ցուցահանդեսներին, սիմպոզիումներին և համաժողովներին:

Հոդված 6

Կողմերը միմյանց կօժանդակեն զբոսաշրջության բնագավառի կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցում և կխրախուսեն զբոսաշրջության բնագավառում մասնագետների, փորձագետների և լրագրողների փոխանակումը:

Հոդված 7

Կողմերը կակտիվացնեն համագործակցությունը զբոսաշրջության բնագավառի միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում:

Հոդված 8

Կողմերը սույն Համաձայնագրի կիրառումը կհանձնարարեն իրենց՝ զբոսաշրջության ոլորտը կառավարող պետական լիազոր մարմիններին:

Հոդված 9

Կողմերը սույն Համաձայնագրի կիրառմանն առնչվող հարցերի կարգավորման նպատակով, անհրաժեշտության դեպքում հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից կստեղծեն Համատեղ հանձնաժողով: Հանձնաժողովի նիստերն ըստ անհրաժեշտության կգումարվեն Հայաստանի Հանրապետությունում կամ Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունում: Համատեղ հանձնաժողովը կգործի իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում Կողմերը դրանք կլուծեն դիվանագիտական ուղիներով:

Հոդված 11

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի

12-րդ հոդվածով նախատեսված կարգով ու կհանդիսանան դրա անբաժանելի մասը:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման ավարտը հավաստող վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից և գործում է անորոշ ժամանակով: Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարել Կողմերից որևէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2013թ. նոյեմբերի 12-ին երկու հավասարազոր բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով: Մեկնաբանության ժամանակ առաջացած հակասությունների դեպքում, կգերակայի անգլերեն լեզվով տարբերակը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. հունիսի 3-ին